



# ԲԱԶՄԱՎԷՊ

ՌՅԺԵ • 1866 — ՔՍԱՆԵՐՈՐԴ ԶՈՐՐՈՐԴ՝ՏԱՐԻ • — ԱՊՐԻԼ

## ԲԱՐՁՐ ԱՍԻԱ

Քննուչքիւն երեք եղբայրց •

Բարձր Ասիա կ'ըսուի Հնդկաստանի հիւսիսային կողմէս ինչուան թուրքաստանի կամ թաթարաց անապատները տարածուած երկիրը . այս վերջին ընդարձակ և ցամաք տարածութեանց և Հնդկաց բարեբոյս և գեղեցիկ դաշտաց միջոցը երկրագրնտիս կուրծքը բարձրացած է՝ ուրիշ ամեն կողմերէն աւելի . հոն են երկրիս մեծագոյն և բարձրագոյն լեռնիքն : Թէպէտ և հին ժամանակներէ 'ի վեր ծանօթ էր և առակի պէս եղած էր Եւնաշուն լեռանց բարձրութիւնն, որ բնիկ կոչմամբ Հիւնաշայա կ'ըսուին, և մեր հին աշխարհագիրն <sup>1</sup> ալ կ'ըսէ, « Եւնաշուն լեռուն է բարձր և երկայն » քան զամենայն լեռինս », սակայն ոչ անունց չափը և ոչ տարածութիւնը ծանօթ էր, ոչ միայն հիներուն, այլ և նոր

աշխարհագրաց ալ ինչուան ետքի տարիներս . երբ Անգղիացիք (որք աւելի քան զԱղեքսանդր և զԼէնկթիմուր յառաջ անցան աշխարհակալութեամբ), ուղեցին ուսումնական կերպով ալ քըննել իրենց ստացած անհուն սահմանները, և չափել կրցածնուն չափ այն համբաւեալ երկնաբերձ լեռները, որ իրենց և Հնդկաց սահմաններուն ետև յառիտենական սրարսպաց պէս կանգնած են . և գրեթէ անմիջապէս ընդարձակ դաշտագետնին երեսէն վեր՝ մէկէն 'ի մէկ յանկարծ թուռցած առադաստի պէս բարձրանալով՝ ամեն տեսողի և հասկըցողի ալ վկայել կու տան այն աշխարհին Բարձր կոչմանը : Արդէն տարիներէ 'ի վեր կ'աշխատէր Անգղիոյ Հնդկային ընկերութիւնն այս գործոյս վրայ, ճարտար և հմուտ սպայից և արուեստաւորաց ձեռքով, երբ ասկէ տա

<sup>1</sup> Խորենացի :

սը տարի մը առաջ (1854) իրեն ներկայացան աւելի մեծագոյն և օգտակար աշխատութեանց անձնանուէր իրեք գերմանացի եղբայրք, Շրակիևը՝ Վայդ մականունանեալք, Բոպերդ, Ատոլֆ, Հերման. որոցմէ միջինն իր մեծափափագ՝ միանգամայն և յանդուգն հետազօտութեանցը զոհ եղաւ, Պոլսարայի սահմաններուն մէջ քննութիւն ըրած աւտեն, տեղացիներէն սպանուելով. մէկալ եղբայրքն հիմայ կը հրատարակեն իրենց բազմաշխատ և զարմանալի քննութեանց արդիւնքը՝ մեծածախ և թանկ կագին տպագրութեամբ. իրեքն ալ հրմուտ ըլլալով թէ աշխարհագրական, թէ չափական և թէ բնական դիտութեան ամենայն մասանց, միանգամայն և պատկերհանութեան, Ժամանակիս դժուարին և յիրաւի մեծագործ բաներուն մէկը յաջողեցան կատարել. և այն համբաւեալ բարձրութեանց՝ անձամբ և փորձով վկայ եղան, այնքան բարձր տեղեր ելնելով՝ ուր ինչուան հիմայ մարդու ոտք հասած չէր:

Ասոնց քննութեանէն աղէկ ճանչցուեցաւ որ Բարձր Ասիա ձևացնողը չէ մէկ, այլ երեք լեռանց գրեթէ զուգահեռական շարք են, որք արևելքէն դէպ յարևմուտք կը ձգուին. ասոնց հարաւագոյնն և ՚ի հնուց ծանօթն է՝ Հիմալայա, որ Հնդկաց բարդաւաճ և մարդաշատ դաշտ-ու-քաղաք գետնին հիսիսային կունակէն կը բարձրանայ, առանց՝ իբրև յառաջարան մը՝ ուրիշ մանր և ցած լեռներու. նոյնպէս միւս կողմէն ալ չունի այն միջնորդ լեռները, այլ իբրև պարիսպ դէպ ՚ի երկայնքը կ'երթայ յարևմուտս. որով իր հիւսիսային կողմէն խորահովիտ մը կը ձևանայ՝ իր և երկրորդ լեռնաշարին միջոց: Այս երկրորդ լեռանց պարը կ'անուանի Գարաքորաձ, և գրեթէ առջինին հաւասար է երկարութեամբ. իսկ բարձրութեամբ՝ եթէ անոր գագաթանց հաւասարներ չունի, սակայն միջին չափով ըծովուն երեսէն վեր ընդհանրապէս բարձր է քան զՀիմալայա: Այս երկու լեռնաշարից միջոցն է Թիպէդ աշխարհը: Եր-

րորդ լեռնաշարը կոչուի ֆիւնլիւն (Քուէկուն), որ առջիններէն աւելի կարճ է, և Հիմալայայ պէս յանկարծ կը բարձրանայ Թուրքաստանի և միջին Ասիոյ անապատաց մէջ. իր և Գարաքորաձի միջոցէ Թուրքաստանի մէկ մասն: Երեք լեռնաշարից և իրենց միջոցաց տարածութեան լայնքը կրնանք իմանալ, եթէ ըսենք թէ մէկը անդադար անընդհատ քալելով՝ քսան օր պէտք է որ կտրէ այդ լայնքը. իսկ երկայնքը՝ Յունաստանի և Սպանիոյ միջոցին երկայնութեանը կը հաւասարեցընեն մեր քննողքն:

Յայտնի է որ Հիմալայայ պէս բարձր լեռանց գագաթունքը միշտ սառնապատ պիտի ըլլան. բայց այն մշտնջենաւոր ձիւնով պատած գլուխներուն հետ կ'երևան սև և կերպ ու կերպ տեսքով սառեր, և անբացատրելի կերպարանքներ. շատ նեղ և խոռոչաւոր ձորեր, ուսկից խորովածայն հեղեղներ կ'իջնեն. բայց որ զարմանալին է՝ այնքան երկայն և մեծ լեռնաշարին վրայ՝ ընդարձակ տափարակ մը չկայ, և ոչ մեծ լիճ մը, բայց եթէ ցածագոյն լեռանց վրայ: Ասոր նման է Թիպէդ ալ, որ դեռ քիչ տարի առաջ՝ լայնարձակ լեռնատափ կամ տափարակաւոր երկիր մը կարծուէր. և հիմայ ճանչցուեցաւ որ ինքն ալ քիչ և պզտիկ տափարակներ ունի, և երկայն ու բարձր լեռնահովիտ մ'է, որուն նմանը կարծուի թէ չկայ երկրիս վրայ. իր արևելեան մասէն կ'անցնի Տիբեթի գետն և կ'երթայ Հնդկաց Պրահմաբուդրա գետոյն խառնուելու. իսկ արևմտեան մասէն կ'անցնին Ինդոս և Սաղլէճ. երկու մասերը զատողը լեռնահովիտին քամակ մ'է 15000' բարձր, որուն մօտերը լճեր կան: Արևելեան Թիպէդի մէջ 10000' բարձրութեան վրայ է Լիւաւա մայրաքաղաքն Տալայի Լամային, այսինքն է Թիպէդի և ամենայն Պուտտեանց հոգևոր իշխանապետին. իսկ արևմտեան Թիպէդի մէջ որ Մեծ կամ Բարձր Թիպէդ կ'ըսուի, կայ Կաթոք գլխաւոր քաղաքաւանն. արևմտեան մասն են և Լատաք կամ Միջին Թիպէդ, ու Պալդի՝ փոքր Թիպէդ: Թիպէդի արև-

մտեան կողմը լեռները կը ճրղճրղին , և երկայնիկեկշարք մը Պո՛ւրդր կամ Պե՛լուդը ըսուած՝ դէպ ՚ի Հիմալայա կը դառնայ : — Քիւնլիւն՝ համեմատութեամբ աւելի մեծ լեռնադաշտեր և բարձրատափեր ունի . որոնք բոլոր երկրիս ալ բարձրադոյն տափերն կրնան ըսուիլ , և են Տա՛փաւանկ 17000՝ , Պոշլու 16000՝ , և այլն . ասոնք թէպէտ և ամառը կ՛ազատին ձիւնէ , բայց շատ բուսաբեր ալ չեն . վրանին շատ լճեր կան , գրեթէ բոլորն ալ աղի :

Շլակիւնդվայդ եղբարք երբեմն միաբան երբեմն առանձին գրեթէ բոլոր Հնդկաստան պտըտեցան չափերով և քննելով . բայց իրենց ամենէն գլխաւոր և մեծ գործը կը սեպուի՝ լեռանց վրայ ելնելը և չափելը , և մանաւանդ Բարձր (արևմտեան) Թիպէդի վրայ ճանապարհորդելը , ինչուան 17 և 18000՝ բարձրութիւն , ուր դեռ Եւրոպացի մարդ չէր գնացեր : 1275 տեղեաց դիւքերը ըստայդ քննութեամբ նշանակեցին , որոց մեծ մասն Հիմալայայ և Թիպէդի լեռանց վրայ է . ուր և երկրիս բարձրագոյն կէտերը ծանուցին , որոցմէ 45 հասն կը գերազանցեն Ամերիկայի բարձրագոյն կէտէն , (որ է Ագոնգակուա 23004 անգղ. ոտք) , որ և երկրիս ուրիշ մասանց մէջ բարձրագոյնն է : Արևելեան Հիմալայի մէջ է հիմայ երկրիս ծանուցեալ բարձրագոյն կէտը , կուռըրիսաւնիքար , 29002՝ անգղիական՝ , զոր Անգղիացիք Էվլըրեսդ կոչեցին անուամբ քաջ սպային , որ 20 տարի (1823—1843) աշխատեցաւ Հընդկաց երկիրը չափելու , և նախ ճանչցաւ այն լեռան բարձրութիւնն ալ : Եւրոպայի բարձրագոյն և գերահոշակ Սպիտակ լեռն (Մոն-Պլան) գրեթէ ասոր կիսոյն չափ է . մեր հոշակաւոր Բարձր Մասիսն ալ պակաս է քան ասոր երրորդ մասը : Երկրորդ բարձրութեամբ լեռն է Գարաբորումի մէջ՝ Տափաւանկ , 28278՝ անգղ . երրորդն Քանիլեձիւկա 28156՝ , չորրորդն Սիհզոշ 27799՝ և հինգերորդն Տափաւանկի 26826՝ ,

դարձեալ Հիմալայեանց մէջ : — Քիւնլիւնի լեռնաշարից մէջ ինչուան հիմայ 22000 ոտքէ բարձր լեռ չէ ճանչցուած : Աս դարուս սկիզբը (1802) Հումպոլդ գերահոշակ երկրաբանն փորձեց այն ատեն Ամերիկայի ամենէն բարձր կարծուած Չիմպորասոյ լեռան վրայ ելնել , և հասաւ մինչև ՚ի 19282՝ անգղ . բարձրութիւն . իրմէ վերջը երկու անգղիացի եղբարք Յակոբ և Աղեքսանդր ձերարտ՝ Թիպէդի մէջ ինչուան 19411՝ բարձր ելան Սթիդի լեռան վրայ . և տասը տարի վերջը 20400՝ անկէ ետև անգղիացի չափողքն ինչուան 21400՝ բարձր տեղ մը եռանկիւնաչափութեան նշան մը դրած էին . իսկ Շլակիւնդվայդ եղբարք յամին 1855 յ՝19 օգոստ . իպիկաւնի ըսուած լեռան գագաթն ելան՝ 22259՝ բարձր . ասկէց վեր տեղ մարդ ոտք կոխած չէ , ըստ մեր գիտութեան . միայն օդապարիկ գնտով աւելի բարձր ելած են , որոյ բարձրագոյն կէտը հասաւ Կլէյլըր անդղիացին (5 սեպտ. 1862) ինչուան 32000՝ , որ է ըսել բարձր քան զամենայն լեռինս , ուսկից վեր գրեթէ անկարելի ալ է մարդուս դիմանալ :

Լեռանց գագաթէն աւելի զարմանալի և օգտակար են իրենց քամակաց կամ լժոց միջի անցքերն , ուսկից՝ կողմէ կողմ կամ երկրէ երկիր կ՛անցնուի . յայսմ մասին ալ գերմանացի եղբարքն ինչուան 19000՝ բարձր տեղուանքէ անցեր են , և երբեմն օրերով ալ քալելով : Հիմալայա լեռանց վրայ 21 հատ անուանի լեռնանցք ճանչցեր են , 3 ՚ի Գարաբորում և 3 ՚ի Քիւնլիւն . որոցմէ բարձրագոյնքն են ՚ի Գարաբորում , մինչև 19000՝ . բայց Թիպէդի իպիկամին լեռնանցքն անոնցմէ ալ բարձր է , 20459՝ ըլլալով : Ալպեան լեռանց մէջ բարձրագոյն անցքն է (վայս-Թոր) 12136՝ :

Ջրոց կողմանէ շատ առատաբուղիս են Բարձր Ասիոյ լեռինքն . բարձրագոյն աղբիւր ցուրտ ջրոյ ճանչցուած է ՚ի Թիպէդ 17650՝ , իսկ ՚ի Հիմալայա 16000՝ . իսկ ջերմուկը 52 տեղ յայտնուած են , որոցմէ ոմանք բազմաթիւ են քովէ քով : — Լիճք , ինչպէս վերը յիշեցի , Հիմալայի

վրայ քիչ և պզտիկ են. միայն ցած լե-  
րանց վրայ գտուին մեծեր, որոնց գը-  
խաւորն Նախնիդալ 6520', դեռ մեր  
(Հայոց) երկրին Սեանայ լճէն ցած է,  
և երկրորդն վուլար 'ի Բայջմիր 5126'  
մեր վանայ ծովէն ցած է: Բայց թի-  
պէդի մէջ՝ թէ Գարաքօրում և թէ  
Քիւնլիւն լեռանց վրայ կան բարձր լճեր,  
ինչպէս Աքաւսիսն 16620', Ղօկիսակար  
15693, Յօւքար 15684, և ուրիշ 12  
հատ՝ 14000 ոտքէ վեր:— Բարձր Ասիոյ  
մեծ ջրաբաշխն է Գարաքօրում. այս  
լեռնաշարին երկու կողմէն կ'իջնեն կ'եր-  
թան գետերն. ոմանք 'ի հարաւ 'ի Հընդ-  
կաստան և 'ի Հնդկային ծովն, ոմանք  
'ի հիւսիս՝ յանապատս Միջին Ասիոյ,  
ուր կամ կը կորսուին, կամ մեծամեծ  
լճաց մէջ կ'ինկնան կամ ինչուան 'ի  
ծովն Չինաց կ'երթան: Նշանաւոր բան  
մ'է այս գետոց առաջ գալը, որ ոչ այն-  
չափ աղբիւրներէ կը բղխեն՝ որչափ 'ի  
սաւաւմանեաց: Ալպեան լեռանց վրայ  
եղած սառնակոյտերուն նման շատ սա-  
ռոյցք կան և 'ի լեռինս Բարձր Ասիոյ,  
որոց ամենէն մեծերը ճանչցուեր են 'ի  
Գարաքօրում. և գլխաւորներէն մէկն  
Սանսարի լեռնանցից մօտ է, թիպէդի  
լեհ քաղքէն դէպ 'ի թուրքաստանի  
Եարբանտ քաղաքը տանող ճամբուն  
վրայ. Պալդիի մէջ Պալդորոյ լեռանց  
վրայ սառոյց մը կայ 36 անդդիական  
մղոն երկայնութեամբ և 1-2½ լայնու-  
թեամբ. ուրիշ երկուք ալ քովէ քով  
ըլլալով՝ ինչուան 64 մղոն երկայնու-  
թիւն ունին: Ասոնց քով Եւրոպիոյ սա-  
ռոյցքն շատ պզտիկ են, իսկ Ամբրիկա  
կամ ուրիշ կողմեր՝ բնաւ չկան: Հիմա-  
լայայ վրայ սառոյցքն ինչուան 11000'  
կ'իջնան, թիպէդի մէջ 10000', իսկ ձեան  
սահմանը, այսինքն ձիւներուն հալելու  
գիծը լեռանց բարձրութեան վրայ, Հի-  
մալայայ լեռանց հարաւակողմը ինչուան  
16000' բարձրութեան կը հասնի, հիւ-  
սիսակողմը 17000'. Գարաքօրումի վը-  
րայ ինչուան 19000'. Քիւնլիւնի վրայ  
15000էն վեր. ամենն ալ միջին բար-  
ձրութեամբ: Կան քանի մը դատ և սը-  
րաձև լեռներ որ ինչուան 20000' բար-

ձրութեան ձիւնէ ազատ կ'ըլլան: Ին-  
չուան 5000' բարձր տեղումաբ գրեթէ  
բնաւ ձիւն չիգար, և եթէ երբեմն դայ՝  
շուտով կը հալի:

Ըստ բուսաբերութեան՝ Հիմալայի  
ստորոտի դաշտաց մէջ ինչուան 3000'  
բարձրութիւն ծովուն երեսէն վեր, ա-  
մենէն մեծ ծառեր ալ կը բուսնին, և  
տաք սիրող արմաւենիք, թզենիք և խը-  
ժաբեր ծառք: Իսկ անտառային ծառք  
շատ աւելի կը բարձրանան. և կան ընդ-  
արձակ հին թանձր անտառք, որ ձան-  
կալ կ'ըսուին, որոց գետինն միշտ խո-  
նաւ է, օդը ծանր, ջրերը տաք. ընդ  
հակառակն 6-9000' բարձրութեան մի-  
ջոց եղած անտառները՝ շատ զուարճա-  
ճալի և անուշոք են. աւելի վեր՝ մեծ  
ծառեր չեն գտուիր. իսկ թիպէդի մէջ  
գրեթէ բուն անտառ չկայ՝ գետնին  
բարձրութեան պատճառաւ. բայց աշ-  
խատութեամբ և խնամքով՝ Լամայք  
(քուրմք) ինչուան 16457' բարձր վա-  
նատեղի մ'ալ ծառեր կը դարմանեն:  
Գարաքօրումի և Քիւնլիւնի վրայ 14-  
16000' բարձրութեան վրայ ալ թուփ  
մը կայ Եալաձերէ ըսուած, որ փոխա-  
նակ վեր բարձրանալու հորիզոնաբար  
կը տարածուի՝ զինքը սնուցող աղտո  
գետնին վրայ: Հիմալայայ վրայ ինչուան  
11800' բարձրութեան ծառք կը գը-  
տուին. Քիւնլիւնի հիւսիսակողմը՝ 9100':  
Ընդեղէնք ալ Հիմալայայ վրայ ծառոց  
սահմանը կը գտուին. իսկ թիպէդի մէջ  
ինչուան 14700' բարձրութեան վրայ  
վարուցան կ'ըլլայ: Բանջարեղէնք՝ Հի-  
մալայայ վրայ ինչուան 15400' կը բուս-  
նին. 'ի թիպէդ 16500'. իսկ Քիւնլիւնի  
վրայ 15000'ի չեն հասնիր: Թուփք ալ  
'ի Հիմալայայ բանջարեղնաց հաւասար  
են, 'ի թիպէդ ինչուան 17000' բարձրու-  
թեան կը գտուին, 'ի Քիւնլիւն՝ 14000':  
Ապառաժ լեռանց վրայ յայտնասերմն  
ըսուած բուսակք կը գտուին ինչուան  
'ի 19300' բարձրութեան իպի կամին  
լեռնանցից վրայ, և 17500' բարձր շանդի  
լեռնանցից վրայ. Ամբրիկայի մէջ Չիմ.  
պորասոյի վրայ բարձրագոյն բուսաբե-  
րութեան գիծն է 15770':

կենդանեաց ցեղին գալով՝ Հիմալայայ վրայ ինչուան 10000՝ բարձրութեան անտառաց և քարաժայռից մէջ կ'ապրին գաղանք, վազր, ընձառուծ, արջ, աղուէս, մեծամեծ օձեր և այլն, և դոյնդոյն թիթեռնիկք. իսկ այծեմունք, վիթք և մշկազորտ այծեամն՝ ինչուան 14000՝ բարձրութեան վրայ կը գտուին. անոնց հետ նաև գունդ գունդ վայրերն ձիոց և ցլոց և ոչխարաց, իբրև օղու մէջ կը թափառին, գետէ ՚ի գետ երթալով, և խոտաբեր տեղուանք իբնտրուելով. մինչդեռ թռչունք՝ որոց համար ազատ են բարձրութեանց սահմանքն՝ հաղիւ երեքք կ'երևին այն տեղուանք: Մեր ճանապարհորդքն անգամ մը ինչուան 19000՝ բարձրութեան վրայ տեսան վայրի ձիոց (որ քիսնկ կ'ըսուին) և վայրի ցլոց (եւք) երամակներ. որ է բնել սովորական կանաչեղինաց գծէն ալ վեր, և մշտնջենաւոր ձիւներու սահմանաց վրայ. անգամ մ'ալ բուն սառամանեաց վրայ սև ցուլ մը տեսան հեռուէն դիտակով, որ արևուն կեցեր էր տաքնալու: — Թռչնոց ցեղէն միայն արծուիք և մեծամեծ անգեղք կը գտուին. իսկ ուրիշ թռչունք՝ քիչ կամ ոչ, վասն զի իրենց յարմար կերակրոյ միջատք ալ չեն գտուիր հոն. և որովհետև այն դատող թռչնոց կերակուրն միայն կենդանեաց մարմինքն են՝ շատ հեղ ճանապարհորդաց վրայ ալ կը յարձրկին, և կրնան վտանգել. մինչդեռ չորքոտանիք մարդ տեսածնուն պէս կը փախչին, ասոնք կը մտենան: Մեր ճանապարհորդքն ալ փորձեցին այս բանս. անգամ մը 20 օր անանկ տեղուանքէ անցան՝ ուսկից շատ տարիներէ վեր՝ մարդ անցած չէր. և սակայն չորքոտանիք զանոնք տեսածնուն պէս աներևոյթ կ'ըլլային. ընդհակառակն հեղ մը 16-22000՝ բարձրութեան վրայ անցնելով՝ վեց օր իրենցմէ չգատուեցան երամ մը կռնկաց, որք իրենց թողած կերակրոց մնացորդները կը յափշտակէին. ասոր համար մեր ուղևորքն ասանկ տեղուանք ամառատեն ալ զգեստով կը ծածկուէին, և կը ջանային ըստ կարելոյն մարդա-

կոխ տեղերէ անցնիլ: — Այս կողմերուս կենդանեաց մէջ նշանաւոր էր տեսակ մը վայրի գեղեցիկ ոչխար, երկայն և լորած եղջիւրով, զոր յի դարուն մէջ տեսեր և նկարագրեր էր Մարգոյ-Բուլոյ վենետկեցին. հիմայ այս տեսակէն բռնաւ շտեմնուիր, միայն եղջիւրներն երբեմն կը գտուին: — Կենդանեաց ցեղին սահմանը ինչուան 20459՝ բարձրութեան վրայ գտան մեր ուղևորքն. բայց հոն դատածնին միայն սուզական ճճիներ էին:

Բարձր Ասիոյ երեք լեռնաշարքն մարդկան ազգաց ալ անջրպետ են: Հիմալայի երկրին բնակիչքն են Հնդիկք, շատ ու զանազան ցեղեր բաժնուած՝ որք իրարու խառնուրդ ունին. և ընդհանրապէս ամենքն ալ կրօնասէր և դիւրահաւատք են. իրենց պրահմանները (քահանայք) շատ բազմաթիւ են, նոյնպէս և ուխտաւորքն ու ճգնաւորքն: — Թիպէդի բնակիչքն Մողոլի ցեղէ են, լեզունին ալ յատուկ, կրօնքնին ալ՝ որ է Պուտհեան աղանդն: Ասոնք ալ իրենց մէջ զանազան տոհմեր ունին, որոց վայրենագոյնն է Հո՛ւնիաւ ըսուածն ՚ի Բարձրն թիպէդ. մէկալոնք ընդհանրապէս բարեբարոյ են. աւելի խաշնարածութեամբ քան երկրագործութեամբ կ'ապրին. ունին ազնիւ բրդոտ ոչխարներ, եղջերաւորներ (եւք), և մանր բայց աղէկ ձիան. գետնին բարձրութեան, աղիութեան և անձրևաց առատութեան պատճառաւ՝ աղէկ վարուցան չըլլար. պէտք է որ Հիմալայէն գայ իրենց հարկաւոր ապրուստը, ապա թէ ոչ սովէ կը մեռնին: — Երրորդ մասն երկրին՝ Թուրքաստան և Միջին Ասիոյ անապատն՝ Թուրքաց, Մողոլաց և Խըրղրզաց բնակութիւն է, որոնց կրօնքն ալ առջիններէն տարբեր՝ մահմետականն է:

Ըստ քաղաքական վարչութեան՝ Հիմալայի արևմտեան մասն Անգղիացւոց իշխանութեան տակ է. հիւսիսային արևմտեան մասն և թիպէդի արևմտեան մասն ալ՝ Գաշմիրի թագաւորին իշխանութեան տակ, որ և գրեթէ անկախ է

յԱնդրիացւոց . արևելեան թիպէդ, Հիմալայա և թուրքաստան՝ Չինաց հպատակ են . — Ինչպէս երկիրն, այսպէս ալ իր բնակիչքն կրնան բարձր կոչուիլ ըստ բնակութեան . վասն զի մեծագոյն մասն բնակչաց՝ ծովուն երեսէն քանի մը հազար ոտք բարձր կը բնակին . Հիմալայեան մասին մէջ՝ որ ամենէն ցածն է՝ գրեթէ 1000'էն պակաս տեղ չկայ . անկէ ալ մէկ երկու հազար ոտք վեր տեղուանք՝ անտառներու խոնաւութեան պատճառաւ՝ ֆլասակար են . անոր համար երկրին մարդաշատ կողմն 5—8000' բարձրութեան միջոցն է . կը գտուին ինչուան 10000' բարձր գեղեր, բայց 12000'է վեր բնակութեան տեղ չկայ հոն . շատ գեղեր ալ կան որ միայն ամառը կը բնակուին : Ընդհակառակն թիպէդի մարդաշատ կողմերն 9-11000' միջոցն է . և չկայ հոն 6000'է ցած տեղ մը . երկրիս ամենէն բարձրաբնակ աշխարհն է թիպէդ, և թերևս բոլոր երկրագնտիս վրայ մարդու բոլոր տարին բնակելու ամենէն բարձր տեղն՝ հոն է, Հանչէ բուսած վանքը կամ քրմարանն, 15117' բարձր, ուր 20 լամա (քուրմ) միշտ կը գտուին . ասոր գրեթէ հաւասար կան քանի մը ուրիշ վանք ալ : Եւրոպիոյ մէջ բարձրագոյն բնակարանն Ս . Բեռնարդոսի վանքն՝ ասոնց կէս բարձրութենէն քիչ մ'աւելի է, 8114' : Իսկ Ամերիկայի Անտեայց վրայ կան բարձր բարձր բնակարանք, ինչպէս Բոդոսի 13665' . Չերրոյ տէ Բասգոյ 14098', և Սանդա Պարպարա քարահատքն 14,508' : Մեր ճանապարհորդքն իպիկամին լեռանց սառոյցքը քննելու ատեն՝ տասն օր (13—23 օգոստ. 1855) բնակեցան աւելի բարձր տեղ, 16650'է ինչուան 19326' . բայց ինչպէս իրենք ալ կը վկայեն՝ այսպիսի բարձրութեանց վրայ քանի մ'օրէն աւելի չիկրնար մարդ դիմանալ :

Բարձր Ասիա իր երկրին բարձրութեանն և լեռնոտ դրից համար՝ շատ բերք և ձեռագործ չիկրնար հայթհայթել : Հիմալայա չունի ընդարձակ դաշտեր մշակութեան . թիպէդին դաշտերն

ալ յարմար չեն . բայց ունի լաւ ձի, ու խար և աղ՝ որ կը պակսի 'ի Հիմալայա : Սակայն կենաց և վայելչութեան կարևոր նիւթերը առատապէս կը գրտուին քանի մը անուանի վաճառանոց տեղուանք, ուր ամեն կողմէ մարդ կու գայ . և որոց մէկն է բարձր քաղաքաւանն կարդոք՝ Ինդոս գետոյն աջակողմը, 15090' . ուր միայն ամառը բնակութիւն կ'ըլլայ . իսկ վաճառահանդիսին ատեն՝ թուրքաստանի անապատէն, Չինաստանէն և Հնդկաստանէն առևտուր ընելու կու գան հոն . որոց բազմութեան համար պէտք կ'ըլլայ այն օրերը աւելի մեծ քաղաք մ'ալ կանգնել լեռան կոնակը վրաններով, զոր թիպեդացիք իրենց եպքերուն սև մազովը կը հիւսեն . Հնդիկք իրենց ճերմակ վրանները կը բերեն, թիւրքմէնք իրենց թաղիքէ շինած գունաւոր վրանները : Աս է մարդկան առևտուրի կամ վաճառականութեան բարձրագոյն տեղն : — Նոյն գետոյն (Ինդոսի) նոյն կողմն է և Լեհ մայրաքաղաքն Լատաքի, 11527', մեծագոյն քաղաք արևմտեան թիպէդի և ժողովարան վաճառականաց քաղաքի և թուրքաստանի միջոց բնակողաց . ամառը շատ հեղ 2—3000 օտարական անպակաս են հոն . վաճառուց մեծ մասն կարավաններով կու գայ, և շատ դժարութեամբ վասն զի պէտք է լեռնանցքներէ անցնիլ որ բարձրութենէն զատ՝ դժուարակրիս և սահուն ալ են . անոր համար անանկ տեղերէ անցնելուն առջի իրիկունը՝ անցորդք բոլոր մորթով մուշտակով կը պատին, գիշերը կրակ վառած, բեռերնին ալ հովուն դէմ պատսպարան կը դիզեն, և կանուխ առտուն ճամբայ կ'ելլեն : Ճամբան գտնելը դիւրին է . վասն զի իրենցմէ առաջ անցողներն քարերով նշաններ դրած են . աւելի յայտնի նշաններն ալ ճամբուն դժարութենէն յոգնած և սատկած գըրաստուց ճերմակ ոսկորներն են : Անոնց պէս հոն բնութիւնն մեռած և լռին կարծուի . հազիւ գիշակեր թռչուն մը այն լուծիւնը կը լուծէ . բայց կարավանին անցնելու ատեն՝ անցորդք իրենց

կենդանիները քշելու համար աղաղակով՝ արձագանգերը կը թնդացնեն. թէպէտ և ամենայն ջանքով ալ շատ հեղ չեն կրնար քանի մը գրաստ չկորսնցնել, որք սահելով և քարէ քար զարնուելով զարհուրելի և դողալի անդունդներու մէջ կը գլորին: Հազիւ իրիկուան դէմ այսպիսի լեռնանցքերէ կրնան ազատիլ և դէպ 'ի վար իջնել խորահովտաց մէջ. — Ինչ մեծ ուրախութիւն: Ճամբուն մէկ մեծ դժարութիւնն ալ գետերն են, որոնց շատին վրայ կամուրջ չկայ. և հարկ կ'ըլլայ երբեմն քարեր ձգել և այնպէս անցնիլ, երբեմն ալ ձիւներու հալելով ջրերը առատացած ըլլալով՝ հարկ կ'ըլլայ օրերով սպասել անոնց եղերքը, ինչուան որ քիչ մը ցածնան: Այս կարավանաց մեծ դիւրութիւն են երկու կուզով ուղտերն, որ սովրած են Գարաքօրումի լեռնանցքերէն անցնիլ դառնալ. այս ուղտերը վարժեցնելով Հիմալայի անցքերուն վրայ ալ, և քիչ մը ճամբաները շտկելով ու քարէ իջևաններ շինելով, տեղ տեղ ալ վարուցան ընել տալով, և քանի մ'ուրիշ դժարութիւններ վերցնելով, Բարձր Ասիոյ վաճառականութիւնը շատ աւելի կը յաջողի, և Եւրոպացիք մեծ օգուտ կրնան քաղել անոր պատուական անասուններէն և գետնի հանքերէն: Այսպէս կը յուսայ Բուպերդ Շլակինդլայդ, որ Գերմանիոյ օրադրաց մէկուն մէջ համառօտ տեղեկութիւն մը գրած է ասկէ քիչ ամիս առաջ, իր և իր եղբարց բաղմաշխատ ուղևորութեանց և քննութեանց վրայօք. ուսկից աւելի համառօտելով քաղուած է մեր սուած տեղեկութիւնն ալ. իսկ ընդարձակ տեղեկութիւններ գրած է և կը գրէ իր եղբօր հետ մեծամեծ և մեծազին հատորոց մէջ, որոց մէկ քանին հրատարակուած են պատկերօք և տեսարանօք. որք ոչ միայն Բարձր Ասիոյ բնական դրից և հանգամանաց վրայ կը խօսին, այլ և անոր բնակչաց և շինուածոց, հնութեանց և նորութեանց վրայ. որոց պատկերներն ալ հանած են. և ոչ միայն պատկեր, այլ

երբեմն և բնականին կամ կենդանոյն վրայ թափծու կաղապար. երբեմն ալ թէ 'ի կենդանեաց թէ 'ի բնիկ տեղացեաց՝ օրինակի կամ հետաքննութեան համար՝ հետեւրին բերած են ինչուան յԵւրոպա:

---

Բ Ի Չ Չ Ի Ո Ղ Ա

---

Գ Ի Բ Բ Ե Բ Բ Ո Բ Գ

---

II

Պէնէտղէլլոյի հրամանատարը դարձեալ սկսաւ ամենայն մարդասիրութիւն բանեցնել կայսերէն և կայսրուհի-թագուհիէն պաշտպանեալ Շառնէի նկատմամբ: Ոչ միայն խուցը չփոխադրեց, այլ մանաւանդ թէ Բիլլիոլայի պատնէշներն և ապաստանները վերստին կանգնել տուաւ, որոնց օգնութեանը սաստիկ կարօտ էր կէս խըլեալ և դալկահար տունկը:

Մորան հազարապետին Շառնէի և բուսակին դէմ ունեցած կատաղութիւնն այնչափ հանդարտեցաւ, որ ամեն առաւօտ լուղուիկի բերնով հարցնել կու տար թէ բան մը կ'ուզէր արդեօք, և թէ ինչ վիճակի մէջ էր Բիլլիոլայ:

Շառնէ այս պատրաստականութիւնը տեսնելով՝ գրիչ թանաք թուղթ ուզեց, որպէս զի ճոխաբար գրէ մտքին բուսաբանական հետազօտութիւնքն ու դիտողութիւնները. վասն զի Դուրինի քաղաքապետին նամակը քննութեան և յարցունիս գրաւելու իրաւունքը չէր ոչնչացնել. երկու դատաստանական խնդրակները իր կտակէ դիւանները տարեր էին, և խոր քննութեանէ վերջը ծանուցանելով թէ Չկրցաւք այն քրիստոնէական քաղիքը գտնել, ամ